

ընթեռնելի ըլլալով հաւանական է որ սխալներ ըլլան արտագրութեանս մէջ:

Թիւ 18. — «Հանգիստ Տէր Գէորգ ԻՄ. Վ.ՐԴ. Պ. Ռուսճուզլեան ծնեալ ի Փ. Պոլիս 1829 փետր. 14 Զեռնադրեալ քահանա 1864 մարտ: Վարդապետ 1875 սեպ. 25: Վախճանեալ 1893 սեպ. 10: ...Յիշատակ Գ. Թելալեան»:

Թիւ 19. — «Սարգիս աւագ քահանայ Սահակեան»: (Մնացեալը ջնջուած. եկեղեցւոյն շրջափակին մէջ):

Թիւ 20. — «Այս է տապան հանգստեան խաչատուրի կողակից Զիւմրիթին որ փոխեցաւ Ռ. Ը. (1759) մարտ 1: Ին»:

«Կրկին ամփոփեցաւ ... բաշարը խաչատուրն որ փոխեցաւ ի կեանս թվին ՌՄԾԶ (1807) ին»: (Կախուած քարերէն):

Թիւ 21. — «Այս է տապան հանգստեան Զուղեցի Պողոսի կողակից Մարդային որ փոխեցաւ ի կեանս ի թուին ՌՄԳԿին (1785) Յունվարի 1 ի ին: Կրկին աստ եղաւ սարաֆ Օհաննէսեան Մկրտիչն թվին ՌՄԿԲ (1813)»:

Այս եւ յաջորդ թիւ 22ը գործածուած են վերի դրան իբր սանդուխի աստիճան:

Թիւ 22 Աստ հանգեաւ պարոն Անտոն,
Սուրբ հոգւոյն հոգար պաշտոն,
Որդի էր մահաւտի...
Եկեղեցւոյ վե՛՛՛՛՛ Մկրտչի
Յիսուս զաս արժանի
Սուրբ արքայութեան...
1848 Յոգոս. 15:

Թիւ 23. — «Այս է տապան հանգստեան հանգուցեալ Ռուտա Գրիգորի որդի դերձակ Մկրտչին որ փոխեցաւ ի տեառն ՌՄԿԳին (1815) ապրիլի ին»:

Թիւ 24. — «Այս է տապան հանգստեան Պոլսէցի անան կատարեքան Տիրուհիին որ փոխեցաւ ՌՄԶ (1831)»:

Թիւ 25. — «Այս է տապան հանգստեան Սեփաստացի Սոզոմոնի որդի դերձակ վարպետ Կարապետին որ հանգեաւ ի տէր յամի տեառն 1845 սեպտեմբերի 23»:

Թիւ 26 ՌՄԶԳ 1835 Գեկ.
Կարապետ...անձամբ քերակայ,
Երկնից փոխեա առ անմահ արքայ,
...
Ամս...թագաւոր սին չէր երկնաւոր,
Միոյ կամաց զամկեալ իբր ձոր,
...
Մանկիկն այս որ էր չքեղ զիմօր,

Աւաղ իրենց քանզի աստ երեք ամօր,
Սուրբ աղաչանօք ձայն արագունի,
Երկամեայ տիօք ...այս շիրմի,
Մինչ փայլէր մատաղ մանուկ Յակոբիկ,
Մատաղ հասակի աստ հանգչի հեղիկ:

Թիւ 27. — «Այս է տապան հանգստեան Իսլիմիացի մահտեսի Յարութիւնի կողակից Աննամանի որ փոխեցաւ թուին ՌՄԺԶին (1767)»:

(Այս եւ Թիւ 28ը պատին մէջ հիւսուած էին, այսինքն եկեղեցւոյն արտաքին պարսպին մէջ):
Թիւ 28. — «Այս է տեղի հանգստեան Կարապետ աղայի որդւոց Մարիամա ՌՄԿԵ (1816) Ամազու ՌՄՀԱ (1823) Թաթեսոսի ՌՄՀԳ (1824) փոխեցան առ աստուած»:

Թիւ 29. — «Տապան հանգստեան Ոսկերիչ Ստեփանի որդւոյ ...գոր հանգեաւ ի տէր ... խորան յամի 186...»:

Թիւ 30 Ըստ հրամանի տեառն արարչի,
Է՛ջ հրծան այս տապանի,
Գազազ պարօն Պողոսի,
Կողակից սորին Նարին տիկնի,
Որ առ Աստուած փոխեցաւ կենցաղոյս,
Յամի տեառն 1836 օգոս.:

Թիւ 31. — «Այս է տապան հանգստեան ... Հայրապետին որ փոխեցաւ ի կեանս թուին ՌՄԾԲ ին(1803)»:

«Կրկին աստ եղաւ Անդրանիկի որդի Թազուր աղայն որ փոխեցաւ ի ՌՄՀԱ (1822) փետրվար ի ին»:

Թիւ 32. — «Այս է տապան հանգստեան մահտեսիան տիրացու Պետրոսի, Պողոսին եւ Մարիամին ՌՄԾԳԿին (1804)»: (Պատին մէջ հիւսուած եւ երեք չորս կտորներու մանրուած):

Թիւ 33. — «Այս է տապան հանգստեան պարոն Հայրապետի կողակից Աննա խաթունի որ փոխեցաւ ի կեանս թվին ՌՄԾ»:

«Կրկին աստ եղաւ պարոն Հայրապետեան Սահակ աղայի դուստր Մարդա խաթունն որ փոխեցաւ ՌՄՀԳ (1824)»:

Թիւ 34. — «Այս է տապան հանգստեան Փազարճըքի Քիւչիկ Հայրապետի որդի հանգուցեալ Մաթեսի Կարապետին որ հանգեաւ թուին Հայոց ՌՄԼԱ (1782) յուլիսի ժԱին»:

Թիւ 35 Ըստ հրամանի արարչին,
Է՛ջ ի հրծան սոյն տապանի,
Որ է պարկեշտ եւ զովելի,
Սա է որդի խաչեր ծառայի,
Գերձակ հաճի հանձոյ է զովելի,
Որ փոխեցաւ ի չափ հասակի,
Թվին ՌՄԻԹ յունվարին Ա.ի: